

Գեղարքունիքի մարզպետի տեղակալը այցելել է մարզի բազեականներին

24.08.2017

Օգոստոսի 24-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանն հանդիպել է <Բազե> համահայկական երիտասարդական հավաքում Գեղարքունիքի մարզը ներկայացնող ջոկատի անդամների հետ: Հանդիպման ընթացքում բազեականները կիսվել են իրենց տպավորություններով և հավաստիացրել, որ Գեղարքունիքի մարզը ներկայացվում է արժանվույնս: Կարեն Հակոբյանը ոգևորել ու քաջալերել է երիտասարդներին՝ առաջիկա մրցութային միջոցառումներում մրցանակային տեղեր գրավելու ակնկալիքով: